Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների

1. Տեղեկացե՛ք Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայի մասին: Պարզե՛ք, թե արդյոք Ձեր ձեռնարկությունը կարող է օգտվել Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայից, և թե Դուք ու Ձեր աշխատողները ինչպես կարող եք օգուտ քաղել դրանցից: Օգտագործե՛ք Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP)՝ Աշխատողի համար ամբողջ դրույքին համարժեք աշխատաժամանակի հաշվիչը (FTE) HealthCare.gov/shop-calculators-fte կայքէջում՝ ծրագրից օգտվելու Ձեր իրավունքը պարզելու համար:
2. Զրուցե՛ք Ձեր աշխատողների հետ: Պարզե՛ք Ձեր աշխատողների ապահովագրական ծածկույթի հետ կապված կարիքները: Սա կօգնի Ձեզ ապահովագրական ծածկույթի հետ կապված որոշման հարցում, և Դուք գաղափար կկազմեք, թե քանի աշխատող կարող է մասնակցել: Դուք թերևս պետք է բավարարեք նվազագույն մասնակցության թվաքանակ Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայից ապահովագրական ծածկույթ գնելու համար: Օգտագործե՛ք Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) նվազագույն մասնակցության թվաքանակի հաշվիչը HealthCare.gov/small-businesses/shop-calculators-mpr կայքէջում, որպեսզի պարզեք, թե քանի աշխատող պետք է ընդունի Ձեր ապահովագրական ծածկույթի առաջարկը:
3. Աչքի անցկացրե՛ք Ձեզ հասանելի առողջության ապահովագրության պլանները: Բժշկական և ատամնաբուժական պլանների ու գների մասին տեղեկանալու համար այցելե՛ք HealthCare.gov/see-plans/#/small-business:
4. Նախանշե՛ք Ձեր բյուջեն: Մտածե՛ք, թե որքան գումար կարող եք ծախսել խմբային ապահովագրական ծածկույթի համար: Ձեզ նաև անհրաժեշտ կլինի հաշվի առնել, թե Ձեր աշխատողները որքան գումար կարող են ծախսել իրենց ապահովագրական ծածկույթի համար:
5. Մտածե՛ք, թե երբ եք սկսելու: Փոքր ձեռնարկությունները կարող են սկսել առաջարկներ ներկայացել Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայի ապահովագրական ծածկույթի մասին տարվա ընթացքում ցանկացած ժամանակ: Ձեզ անհրաժեշտ կլինի ընտրել մեկ ամիս ապահովագրական ծածկույթի մեկնարկի համար: Հաշվի առե՛ք Ձեզ և Ձեր աշխատողների համար ամենահարմար ժամկետները:
6. Պարզե՛ք, թե արդյոք Դուք կարող եք օգտվել հարկային կրեդիտից: Փոքր ձեռնարկությունների առողջության ապահովագրության համար հարկային կրեդիտի նախահաշվարկը կարող է օգնել Ձեզ պարզել, թե արդյոք Ձեր ձեռնարկությունը կարող է իրավունք ունենալ օգտվելու Փոքր ձեռնարկությունների առողջության ապահովագրության համար հարկային կրեդիտից, և որքան կարող է կազմել այդ գումարը: Այցելե՛ք HealthCare.gov/shop-calculators-taxcredit:
7. Կազմակերպե՛ք: Հավաքե՛ք Ձեր ձեռնարկության մասին հիմնական տեղեկությունները, ինչպես օրինակ՝ այն ամբողջ և ոչ ամբողջ դրույքով աշխատողների ցուցակը, որոնց նախատեսում եք տրամադրել առողջության ապահովագրություն, ինչպես նաև Ձեր հարկային նույնականացման համարը;
8. Ստացե՛ք օգնություն: Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայում աշխատելու համար գրանցված լիցենզավորված գործակալներն ու միջնորդները կարող են օգնել Ձեզ ուսումնասիրել ապահովագրական ծածկույթի Ձեզ հասանելի տարբերակները և լրացնել դիմումը՝ սովորաբար Ձեզ կամ Ձեր աշխատողների համար առանց լրացուցիչ ծախսի:

Դուք իրավունք ունեք տեղեկություն ստանալու այս ապրանքի մասին այլընտրանքային եղանակով: Դուք նաև իրավունք ունեք բողոք ներկայացնելու, եթե Դուք զգում եք, որ Ձեր նկատմամբ խտրականություն է դրսևորվել: Առավել մանրամասն տեղեկությունների համար այցելե՛ք https://www.cms.gov/About-CMS/Agency-Information/Aboutwebsite/CMSNondiscriminationNotice.html կամ զանգահարե՛ք Ապահովագրական շուկայի տեղեկատու կենտրոն՝ 1-800-318-2596 հեռախոսահամարով: TTY օգտագործողները պետք է զանգահարեն 1-855-889-4325 հեռախոսահամարով:

SHOP Marketplace
Health Insurance for Small Businesses

CMS Product No. 11630-Armenian
Revised September 2016

Փոքր ձեռնարկությունների համար
առողջության ապահովագրության տարբերակների

SHOP Marketplace

Health Insurance for Small Businesses

Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագիրն (SHOP) օգնում է 1-50 աշխատող ունեցող գործատուներին առաջարկել առողջության ապահովագրություն նահանգներից մեծ մասում: Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայի միջոցով Դուք կարող եք առողջապահական և ատամնաբուժական մատչելի մասնավոր ապահովագրական ծածկույթ գտնել Ձեզ և Ձեր աշխատողների համար:

Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկան

Ընձեռում է Ձեզ վերահսկման հնարավորություն

Որպես գործատու Դուք վերահսկում եք Ձեր առաջարկած ապահովագրական ծածկույթը և այն, թե որքան եք ներդնում Ձեր աշխատողների ապահովագրավճարների ուղղությամբ:

Տալիս է Ձեզ ճկունություն և ապահովագրական ծածկույթի ընտրության հնարավորություններ

- Այցելե՛ք HealthCare.gov/small-businesses ուսումնասիրելու ապահովագրական ծածկույթների Ձեզ հասանելի տարբերակները և որոշեք, թե որն է Ձեր ձեռնարկության համար ամենահարմար տարբերակը:
- Առաջարկե՛ք Ձեր աշխատողներին մեկից ավելի ապահովագրական պլաններ մեկից ավելի ապահովագրական ընկերություններից կամ ընտրե՛ք մեկ ապահովագրական պլան, որը Դուք ցանկանում եք առաջարկել:
- Ապահովագրական ծածկույթ առաջարկե՛ք տարվա ընթացքում ցանկացած ժամանակ:

Կարող է օգնել Ձեզ հարկային կրեդիտից օգտվելու իրավունք ստանալու հարցում

Երբ Դուք առաջարկում եք Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայի ապահովագրական ծածկույթ, Դուք կարող եք իրավունք ստանալ օգտվելու Փոքր ձեռնարկությունների առողջության ապահովագրության համար հարկային կրեդիտից, ինչը կարող է կազմել ապահովագրավճարների ծախսերի ուղղությամբ Ձեր ներդրած գումարի մինչև 50%-ը (մինչև 35% հարկերի վճարումից ազատված գործատուների համար): Հարկային կրեդիտից օգտվելու իրավունք ունենալու համար Դուք պետք է՝

- Ունենաք ամբողջ դրույքին համարժեք աշխատաժամանակով 25 աշխատողից քիչ աշխատող, որոնց տարեկան միջին եկամուտը կազմում է մոտ $50 000 կամ ավելի քիչ:
- Ձեր ամբողջ դրույքին համարժեք աշխատաժամանակի համար վճարեք ապահովագրավճարների ծախսերի առնվազն 50%-ը: Հարկային խնայողությունները կազմում են աշխատողների համար ապահովագրավճարների ծախսերի ուղղությամբ Ձեր կողմից կատարված ներդրման մինչև 50%-ը (մինչև 35%-ը հարկերի վճարումից ազատված գործատուների համար):

Դյուրացնում է ապահովագրական ծածկույթների համեմատությունը

Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայում գների և ապահովագրական ծածկույթների մասին տեղեկությունները ներկայացվում եք ստանդարտ ձևաչափով և պարզ լեզվով, ինչը դյուրացնում է ապահովագրական ծածկույթների տարբերակների համեմատությունը: Դուք կարող եք համեմատել ապահովագրական պլանները՝ ըստ գնի, արտոնությունների և Ձեզ ու Ձեր աշխատողների համար էական համարվող այլ հատկանիշների:

Տրամադրում է մասնավոր ընկերությունների կողմից սպասարկվող առողջության ապահովագրության պլաններ

Ապահովագրական պլանների սպասարկումն իրականացվում է առողջության ապահովագրության մասնավոր ընկերությունների կողմից ճիշտ այնպես, ինչպես փոքր խմբերի համար ապահովագրական պլանների սպասարկումը: Բոլոր ապահովագրական պլաններն առաջարկում են հիմնական առողջապահական արտոնությունների նույն կազմը, այդ թվում՝ բժշկին այցելություններ, կանխարգելիչ խնամք, հիվանդանոցային բուժում և դեղատոմսեր: Գոյություն ունեն նաև սահմանաչափեր ապահովագրական ընկերությունների կողմից՝ տարիքից կախված տարբեր ապահովագրավճարներ գանձելու համար, ինչպես նաև սահմանափակումներ՝ նախկինում առաջացած հիվանդությունների պատճառով անհատներից առավել մեծ գումար գանձելու համար:

Ինչպես ստանալ օգնություն

Ձեզ հուզող հարցերի պատասխանները ստանալու 3 եղանակ կա:

1. HealthCare.gov՝ Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայում առկա են բազմազան տեղեկատվական աղբյուրներ ու միջոցներ, որոնք կօգնեն Ձեզ գտնել Ձեր ձեռնարկության համար ամենահարմար ապահովագրական ծածկույթը:
2. Գործակալները և միջնորդները՝ Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) ապահովագրական շուկայում գրանցված՝ լիցենզավորված ապահովագրական փորձագետները կարող են օգնել Ձեզ որոշումներ կայացնելու հարցում և ծրագրում ընդգրկվելու գործընթացում՝ սովորաբար անվճար: Այցելե՛ք LocalHelp.HealthCare.gov Ձեր տարածքում գործակալ կամ միջնորդ որոնելու համար:
3. Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) տեղեկատու կենտրոնը՝ Դու կարող եք կապ հաստատել Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) տեղեկատու կենտրոնի աշխատակցի հետ **1-800-706-7893** հեռախոսահամարով՝ երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան ժամը 9:00-ից մինչև երեկոյան ժամը 7:00-ը (Արևելյան ժամանակով): TTY օգտագործողները պետք է զանգահարեն 711՝ Փոքր ձեռնարկությունների համար առողջության ապահովագրության տարբերակների ծրագրի (SHOP) տեղեկատու կենտրոնի ներկայացուցչի հետ կապ հաստատելու համար: